Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 04-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն)

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ <<ՇՀԱՊՁԲ-15/16-31-2016 (ԵՊԲՀ)>>

Պատվիրատուն՝ **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը**, որը գտնվում է **ք. Երևան, Կորյունի 2** հասցեում, ստորև ներկայացնում է **<<ՇՀԱՊՁԲ-15/16-31-2016 (ԵՊԲՀ)>>** ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

Հարցադրում 1:	Բնութագրերում նշված է <<Օբյեկտիվներ՝ գունային գծանշմամբ ըստ CARL ZEISS-ի>>, ինչ ի նկատի ունի Պատվիրատուն բնութագրելով տվյալ պահանջը, ինչպես նաև խնդրում ենք պարզաբանել տվյալ պահանջի կարևորությունը լաբորատոր մանրադիտակների համար:
Հարցադրման ստացման ամսաթիվ 1:	02.11.2016թ.:
Պարզաբանում 1:	Մանրադիտակները նախատեսված են լաբորատոր և ուսումնական նպատակների համար, ուստի անհրաժեշտ է որ ուսանողները սովորեն օբյեկտիվների բնութագրերը, որոնք նշված են լինում օբյեկտիվների վրա, այդ թվում՝ գունանշմամբ, իսկ <<գունանշումն ըստ CARL ZEISS-ի>> տարբերակը ամենատարածվածն է:
Հարցադրում 2:	1-ին չափաբաժնում նշված <<ֆոկուսավորում՝ կոակսիալ կոշտ կարգավորում 24 մմ միջակայքում և ճշգրիտ կարգավորում 2 միկրոն ճշտությամբ>>: BOECO GmbH Germany պաշտոնական կայքում /<<www.boeco.com>>/ BM-117 BOECO GmbH Germany մոդելի ճշգրիտ կարգավորումը հավասար է 4 միկրոնի, ինչը չի համապատասխանում պահանջվող 2 միկրոնին և դիտարկվում է որպես տեխնիկական բնութագրի անհամապատասխանություն: Ընդունելի կլինի արդյոք համարժեք մանրադիտակի ձեռքբերումը ճշգրիտ կարգավորման 4 միկրոնի ճշտությամբ:
Հարցադրման ստացման ամսաթիվ 2:	02.11.2016թ.:
Պարզաբանում 2:	Հրավերի պայմանագրի նախագծով (Հավելված N 6) սահմանված է, որ <<Գնման առարկայի հատկանիշների բնութագրում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ

	աղբյուրին կամ արտադրողին, պարունակելու դեպքում կիրառելի է <<կամ համարժեք>> բառերը՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների>>:
Հարցադրում 3:	Խնդրում ենք նաև պարզաբանել, ինչ է նշանակում 1-ին չափաբաժնում նշված <<Լուսավորում՝ S LED>> արտահայտությունը, քանի որ աշխարհում հայտնի է <<LED>> հապավումը:
Հարցադրման ստացման ամսաթիվ 3:	02.11.2016թ.:
Պարզաբանում 3:	<<S LED>>-ը դա <<LED>> լամպերի ժամանակակից տարբերակն է, որն առանձնանում է առավել երկարակեցությամբ և էներգախնայողությամբ:

Սույն հատարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Պ. Գաբրելյանին:**

Հեռախոս՝ **060-621-249:**

Էլ. փոստ՝ **marketing.ysmu10@gmail.com:**

Պատվիրատու՝ **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ**

<<_04_>>_նոյեմբերի_ _2016թ._